

իմանալի ըլլային անոնք յունական նոր պղատոնական փիլիսոփայութեան ի հեռուստ անդամ անհմուտ եւ յունական մտածելակերպին բռնորովին անձանօթ սերունդին: Եւ թէպէտ Դաւրիժեցի կը հաւաստէ թէ Մելքիսեթ «առանց վարժողի եւ թարց ուրուք ուսուցանողի իւրովի եզիտ զամենայն (իմաստս) ի սկզբանէ մինչեւ ցկատարած», այս ինքն «գիտութեան ամենայն արտաքին գրոց անտարակոյս ի վերայ հասեալ գիտող եղեւ», բայց մենք կրնանք իրաւամբ թերահաւատիլ:

Այդ գովուած «արտաքին գրքերու» մասերն են, ըստ թուարկութեան Դաւրիժեցւոյ, հետեւեալները. 1. Դաւթի Սահմանացն. 2. Պորփիւրի Վերլուծութիւնն. 3. Արիստոտելի Ստորոգութիւնը, Պէրիարմէնիասն, Աշխարհացն, Առաքինութեանն. 4. Դաւթի Վերլուծականը: Ասոնց կից՝ 5. Քերականութիւնն եւ 6. Ամենայն ազգաց Տօմարը:

Մելքիսեթ Վժանցի սկսաւ իւր դասախօսութիւններու ընթացքը Ս. Անանիայի Դպրատան մէջ 1630ին: Հաւանական է կարծել թէ ինչպէս Մեծ Անապատի եւ Լիմի Անապատի մէջ, նոյնպէս հոս անհետաքրքրական երեւցաւ դասախօսութիւններու նիւթը: Կը զրէ գոնէ Ոսկան, թէ իրեն համար անմարսելի էին անոնք:

Դրութիւնը փոխուեցաւ, երբ վերադարձան Լեհաստանէն Սաչատուր Կեսարացւոյ կատարած նուիրակութեան ընկերացող երի-